health net

Ծխելը և հղիությունը

Ծխելը վնասակար է ձեր առողջությանը: Եթե ծխում եք հղիության ընթացքում, դա նաև վնասակար է ձեր երեխայի առողջության համար: Դա կարող է առողջական խնդիրներ առաջացնել, ինչպես օրինակ՝

- ✔ Ծննդյան ցածր քաշ
- ✔ Որոշ բնածին արատներ
- ✔ Վաղաժամ ծնունդ
- ✔ Հղիության կորուստ

Ծխելը կարող է նաև լնդերի հիվանդության պատճառ դառնալ: Հետազոտությունները ցույց են տալիս, որ լնդերի հիվանդություն ունեցող հղի կինն ավելի բարձր վտանգ ունի, որ երեխան ծնվի շատ վաղաժամ կամ փոքր: Հղիության ընթացքում հորմոնալ փոփոխությունների պատճառով դուք կարող եք արդեն իսկ ունենալ լնդերի հիվանդության ավելի բարձր վտանգ:

Եթե դուք հղի եք և թողնում եք ծխելը, դա կարող է օգնել ձեզ խուսափել կամ նվազեցնել առողջական խնդիրները: Սա կարող է նաև մեծ նշանակություն ունենալ ձեզ և ձեր երեխայի համար: Խոսեք ձեր բժշկի հետ այն մասին, թե ինչպես կարող եք թողնել ծխելը և ձեր երեխային առողջ կյանքի սկիզբ տալ:

Եթե ձեզ օգնություն է հարկավոր ատամնաբույժ գտնելու համար կամ հարցեր ունեք ձեր նպաստների վերաբերյալ, այցելեք **www.hndental.com** կայքը: Կամ զանգահարեք.

- **Los Angeles վարչաշրջանի** անդամներ՝ **1-844-233-4522**
- **Sacramento վարչաշրջանի** անդամներ՝ **1-833-493-0428**

Աշխատանքային ժամեր՝ 8 a.m.-ից 5 p.m.-ը, խաղաղօվկիանոսյան ժամանակով

TDD/TTY օգտագործողները պետք է զանգահարեն 1-800-466-7566:

Աղբյուր և կայք.
Մանկական ատամնաբուժության ձեռնարկի 5-րդ հրատարակություն: Ամերիկյան մանկական ատամնաբուժության ակադեմիա (AAPD), www.aapd.org:

Այս տեղեկատվությունը նախատեսված չէ փոխարինելու բժշկական կամ ատամնաբուժական խնամքը: Խնդրում ենք միշտ հետևել ձեր առողջական խնամքի մատակարարի ցուցումներին:

Health Net Community Solutions, Inc.-ը հանդիսանում է Health Net, LLC-ի և Centene Corporation-ի մասնաճյուղ: Health Net-ը Health Net, LLC-ի գրանցված ապրանքանիշն է: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

FLY1955659MH01w (9/25)

www.healthnet.com